

Հավելված

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2017
թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 190-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ

Երևան 2017

Բովանդակություն

Ներածություն.....	3
I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը.....	5
II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը.....	26
III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները	29
IV. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ	31
V. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ	33
Հավելված	35

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի գործունեության ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացված են ամփոփ տեղեկություններ.

- տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման,

- տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի,

- տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմների,

- մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների,

- օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթների վերաբերյալ:

Ծրագրի նպատակներն են՝

1. պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը ապրանքային շուկաներում,

2. ապահովել բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր,

3. նպաստել տնտեսական զարգացման համար բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը և սպառողների շահերի պաշտպանությանը,

4. խթանել մրցակցային մշակույթը:

Վերը նշված նպատակները համապատասխանում են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) Հանձնաժողովի առջև դրված խնդիրներին, շուկայական տնտեսության զարգացման նպատակով պետության կողմից որդեգրված հիմնարար սկզբունքներին, ինչպես նաև արդի տնտեսական և իրավական պայմաններում մրցակցային մշակույթի զարգացման պահանջներին:

Հանձնաժողովը, Օրենքով վերապահված լիազորությունների շրջանակում, 2018 թվականի ընթացքում շարունակելու է ուսումնասիրություններն ապրանքների և ծառայությունների շուկաներում՝ մենաշնորհ և գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների, անբարեխիղճ մրցակցության դեպքերի և շուկաներում անհավասար մրցակցային միջավայր ձևավորող երևույթների բացահայտման, ինչպես նաև համակենտրոնացման նկատմամբ իրականացվող վերահսկողության ուղղությամբ:

Միաժամանակ, արդյունավետորեն գործող տնտեսական մրցակցության միջավայրը՝ հանդիսանալով հասարակական կյանքի տարբեր բնագավառներին սերտորեն առնչվող համակարգ, չի կարող ձևավորվել միայն Հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքների արդյունքում: Հետևապես մեծ կարևորություն է ներկայացնում տնտեսության առանձին ոլորտները կարգավորող և այդ ոլորտներում վարչարարություն իրականացնող բոլոր պետական մարմինների կողմից գործարար համայնքին առնչվող գործողություններում արդար և հավասար մոտեցումների կիրառումը:

Հանձնաժողովը, ծրագրային աշխատանքներ իրականացնելիս, հաշվի է առնում միջազգային փորձը, ուսումնասիրում է համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացումները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ներքին շուկայի մրցակցային իրավիճակի վրա, ինչպես նաև համագործակցում է տնտեսական մրցակցության ոլորտում գործունեություն իրականացնող միջազգային կառույցների հետ: Այդ նպատակով Հանձնաժողովը կշարունակի իրականացնել արդյունավետ, լայնածավալ և ակտիվ համագործակցություն մի շարք միջազգային կազմակերպությունների, Եվրասիական տնտեսական միության, ԱՊՀ մասնակից պետությունների, ԵԱՏՄ անդամ պետությունների, արտերկրի մրցակցային կամ հակամենաշնորհային մարմինների հետ հետևյալ ուղղություններով.

- մրցակցության քաղաքականության կիրարկման լավագույն փորձի փոխանակում,
- միջազգային փորձին համահունչ օրենսդրական բարեփոխումների իրականացում, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում մրցակցային ընդհանուր սկզբունքների և կանոնների կիրարկմանը վերաբերող հարցերի շուրջ նախատեսված պարտավորությունների առումով օրենսդրության ներդաշնակեցում,
- թիրախային ոլորտների ապրանքային շուկաներում առկա մրցակցության իրավիճակի ուսումնասիրությունների իրականացման նպատակով Հանձնաժողովի աշխատակիցների կարողությունների զարգացում,
- գործընկերության ամրապնդում և համատեղ ծրագրերի իրականացում,
- մրցակցության քաղաքականության մասին իրազեկվածության բարձրացում,
- մրցակցային խնդիրների վերաբերյալ խորհրդատվության անհրաժեշտության դեպքում միջազգային փորձագետների ներգրավում,
- Հանձնաժողովի աշխատակիցների և այլ թիրախային խմբերի ներկայացուցիչների համար թեմատիկ դասընթացների և սեմինարների կազմակերպում:

I. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Հանձնաժողովը տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականություն իրականացնող անկախ մարմին է: Հանձնաժողովի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Վերջին տարիների ընթացքում Հանձնաժողովը տարբեր ապրանքային շուկաներում իրականացրել է բազմաթիվ ուսումնասիրություններ, գործարար համայնքի և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ՝ նպատակ ունենալով բացահայտել մեր երկրում տնտեսական մրցակցության բնագավառում առկա խնդիրները: Հանձնաժողովի գնահատմամբ, հասարակության շրջանում մենաշնորհի և գերիշխող դիրք ունեցող ընկերությունները հաճախ նույնացվում են, ինչի արդյունքում թուր տպավորություն է ձևավորվում հանրապետությունում առկա մենաշնորհների քանակի և ծավալի վերաբերյալ: Օրենքի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհի դիրք ունեցող, եթե այդ ապրանքային շուկայում չունի մրցակից: Մնացած բոլոր դեպքերում, երբ ապրանքային շուկայում գործում են մեկից ավելի տնտեսվարող սուբյեկտներ, որոնց իրացման ծավալները գերազանցում են Օրենքով սահմանված շեմերը կամ որոնք համապատասխանում են Օրենքով սահմանված չափանիշներին, այդ տնտեսվարող սուբյեկտները համարվում են գերիշխող դիրք ունեցող: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հայաստանի Հանրապետությունում մենաշնորհային շուկաները հիմնականում կապված են բնական մենաշնորհների և պետության կողմից կոնցեսիոն կառավարմանը հանձնված ոլորտների հետ: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների համաձայն բազմաթիվ ապրանքային շուկաներում (պանրի, հացի, պահածոների, բնական հյութերի, թեյի, երշիկեղենի, մակարոնի, կենդանի ձկան, սառեցված ձկան, ոսպի, հնդկաձավարի, ձավարի, բրինձի, խոզի, տավարի մսի, օղու, գինու) կենտրոնացվածության մակարդակը ցածր է և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ առկա չեն: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ թեև Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաներում (գազավորված ըմպելիքների, կաթնամթերքի, հանքային ջրի, շշալցված աղբյուրի ջրի, դեղերի, սուրճի, կոնյակի, գարեջրի)

գործել են խոշոր (գերիշխող դիրք ունեցող) ընկերություններ, այդուհանդերձ այդ ապրանքային շուկաներում առկա են տասնյակ փոքր և միջին ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, հետևապես կարող ենք փաստել, որ այդ ապրանքային շուկաներում առկա է ձևավորված մրցակցային միջավայր: Անհրաժեշտ է փաստել, որ խոշոր ընկերությունների առկայությունը դեռևս չի նշանակում, որ այդ շուկաներում մրցակցությունը սահմանափակ է: Միաժամանակ, քանի որ խոշոր ընկերությունները մասշտաբի էֆֆեկտի շնորհիվ օբյեկտիվորեն ունեն մրցակցային առավելություն մյուս ընկերությունների նկատմամբ, և, առկա է որոշակի ռիսկ, որ, նրանք, օգտվելով իրենց մրցակցային առավելությունից, կարող են դա չարաշահել՝ մուտքի խոչընդոտներ ստեղծելով մյուս ընկերությունների համար, ապա աշխարհում ընդունված է, որ տնտեսական մրցակցության պաշտպանությամբ զբաղվող մարմինները հետևում են, որպեսզի խոշոր ընկերությունները չարաշահումներ թույլ չտան: Այդ առումով Հանձնաժողովը մշտապես հետևում է բարձր կենտրոնացվածություն ունեցող ապրանքային շուկաներում գործող ընկերությունների գործունեությանը, որպեսզի կանխարգելի նրանց կողմից չարաշահումների իրականացումը:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ հասարակության շրջանում հաճախ թյուր կարծիք է ձևավորվում Հանձնաժողովի գործառույթների վերաբերյալ: Մասնավորապես, Հանձնաժողովի գործունեությունը կապվում է երկրում տարբեր ապրանքների և ծառայությունների գների կարգավորման հետ, որն իրականում գտնվում է Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից դուրս: Գործող օրենսդրությամբ Հանձնաժողովը գների կարգավորման գործառույթներ չունի: Ապրանքների և ծառայությունների գների վերահսկման նկատմամբ Հանձնաժողովի իրավասությունները վերաբերում են բացառապես այն շուկաներին, որտեղ առկա են գերիշխող դիրքի չարաշահման երևույթներ, հակամրցակցային համաձայնությունների և անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ: Ընդ որում, այս դեպքում ևս գերիշխող դիրք ունեցող ընկերություններն իրենք են սահմանում և փոփոխում ապրանքների և ծառայությունների իրացման գները, իսկ Հանձնաժողովի լիազորությունները վերաբերում են միայն այն դեպքերին, երբ գնային փոփոխությունները պայմանավորված չեն շուկայական տնտեսությանը բնորոշ տնտեսական մեխանիզմներով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մամուլում հաճախ են լինում հրապարակումներ ներմուծման ոլորտում մուտքի խոչընդոտների առկայության վերաբերյալ՝ Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել նաև մի շարք ապրանքների ներմուծման բնագավառում, որը նաև նպատակ է հետապնդել պարզելու Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցության

ազդեցությունը ներմուծման ոլորտի վրա: Կատարված ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են այնպիսի ապրանքատեսակներ, որոնք մի կողմից հանդիսանում են լայն սպառման և (կամ) սոցիալական նշանակության ապրանքներ, մյուս կողմից այդ շուկաներում ներմուծման մասնաբաժինը էական է: Ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են 26 ապրանքային խմբեր, որոնցից 19 ապրանքային խմբերում (այլուր, մարգարին, բրինձ, մակարոնեղեն, բուսական յուղ, հավի միս, խոզի միս, ոսպ, ոլոռ, ցորեն, եգիպտացորեն, շոկոլադե սալիկներ, բատոններ և այլ շոկոլադե ապրանքներ, կակաո, խնամքի պարագաներ, շամպուն, մաքրող միջոցներ) 2014-2016 թվականների ընթացքում ներմուծող ընկերությունների քանակն ավելացել է, որը փաստում է այդ շուկաներում մուտքի խոչընդոտների բացակայության մասին: Նշված 19 ապրանքային շուկաներում ներմուծում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների քանակը 2016 թվականին կազմել է 1 534՝ 2014 թվականի 940-ի փոխարեն: Այսպես օրինակ, շաքարավազի շուկայում 2016 թվականի տվյալներով ներմուծում է իրականացրել 48 տնտեսվարող սուբյեկտ, բանանի շուկայում՝ 40 տնտեսվարող սուբյեկտ, կարագի շուկայում՝ 45 տնտեսվարող սուբյեկտ և այլն: Բացի այդ, Հանձնաժողովի կողմից այդ ապրանքային շուկաներում ըստ ներմուծման ծավալների կենտրոնացվածության մակարդակը պարզելու նպատակով հաշվարկվել է Հերֆինդալ Հիրշմանի ինդեքսը (HHI)¹: Այսպես օրինակ, այլուրի գծով 2014 թվականին ինդեքսը կազմել է 2 630, իսկ 2016 թվականին 326, մարգարինի գծով 2016 թվականին կազմել է 653՝ 2014 թվականի 1 420-ի փոխարեն, բուսական յուղի գծով 2016 թվականին կազմել է 918՝ 2014 թվականի 1379-ի փոխարեն, մակարոնեղենի գծով 2016 թվականին կազմել է 578՝ 2014 թվականի 728-ի փոխարեն, բանանի գծով 2016 թվականին կազմել է 4 220՝ 2014 թվականի 8 559-ի փոխարեն և այլն: Ընդհանուր առմամբ, Հանձնաժողովի գնահատմամբ լայն սպառման և սոցիալական նշանակության բազմաթիվ ապրանքային շուկաներում վերջին տարիներին արձանագրվել է մրցակցային միջավայրի էական բարելավում:


Տարբեր երկրներում տնտեսական մրցակցության քաղաքականությամբ և մրցակցության պաշտպանությամբ զբաղվող պետական լիազոր մարմնի կողմից իրականացվող գործունեության արդյունավետության և շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման վերաբերյալ

¹ Նշված ցուցանիշը շուկաներում կենտրոնացվածության մակարդակը բնութագրող և միջազգային պրակտիկայում օգտագործվող առավել տարածված ցուցանիշներից է, որը ստացվում է շուկայում ընկերությունների մասնաբաժինների քառակուսիների հանրագումարի արդյունքում: Այսպես օրինակ, եթե շուկայում գործում են չորս ընկերություններ, որոնցից առաջինի մասնաբաժինը 40 տոկոս է, երկրորդինը՝ 30 տոկոս, երրորդինը՝ 20 տոկոս, իսկ չորրորդինը՝ 10 տոկոս, ապա ցուցանիշը կհաշվարկվի հետևյալ կերպ՝ $HHI=40^2+30^2+20^2+10^2=3\ 000$: Ընդ որում, նշված ցուցանիշը մեկնաբանվում է հետևյալ կերպ. այն դեպքում, երբ կատարված հաշվարկների արդյունքում ցուցանիշը փոքր է 1500-ից, դիտարկվող շուկան կենտրոնացված չի համարվում, 1 500-ից 2 500-ի միջակայքում լինելու դեպքում համարվում է միջին կենտրոնացվածության, 2500-ից բարձր լինելու դեպքում՝ բարձր կենտրոնացվածության:

ամբողջական ուսումնասիրություններ է իրականացնում «Համաշխարհային տնտեսական ֆորում» միջազգային կազմակերպությունը: Կազմակերպության կողմից կատարվող ուսումնասիրությունները ներկայացվում են ամենամյա զեկույցների ձևով, որոնց շարքին է դասվում նաև Համաշխարհային մրցունակության զեկույցը: Նշված զեկույցում հաշվարկվում են 140 երկրների տնտեսական և հասարակական կյանքին վերաբերող բազմաթիվ ցուցանիշներ, որոնցից երեքը վերաբերում են երկրների տնտեսական մրցակցության միջավայրին և մրցակցային քաղաքականության արդյունավետությանը: Նշենք նաև, որ զեկույցը կազմվում է յուրաքանչյուր երկրում գործող տնտեսվարող սուբյեկտների շրջանում իրականացվող փակ և գաղտնի հարցումների արդյունքներով: Ընդհանուր առմամբ, Հայաստանի վերաբերյալ նշված երեք ցուցանիշների գծով 2010 թվականից ի վեր արձանագրվել է զգալի առաջընթաց: Մասնավորապես, հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշով Հայաստանը 2016 թվականին զբաղեցրել է 77-րդ հորիզոնականը՝ 2010 թվականին 138-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 61 կետ (տես՝ Գծանկար N 1):


Գծանկար N 1

Հայաստանում և մի շարք երկրներում հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության ցուցանիշի դինամիկան 2010-2016 թվականների ընթացքում




Մրցակցության վրա ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների ազդեցության ցուցանիշով 2016 թվականին Հայաստանը զբաղեցրել է 51-րդ հորիզոնականը՝ 2010 թվականի 133-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 82 կետ (տես՝ Գծանկար N 2):

Հայաստանում և մի շարք երկրներում մրցակցության վրա ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների ազդեցության ցուցանիշի դինամիկան 2010-2016 թվականների ընթացքում



Դիտարկվող հաջորդ ցուցանիշը ներքին շուկայում մրցակցության ուժգնությունն է, որի գծով 2016 թվականին զբաղեցրել ենք 91-րդ հորիզոնականը՝ 2010 թվականին 136-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 45 կետ (տես՝ Գծանկար N 3):

Հայաստանում և մի շարք երկրներում ներքին շուկայում մրցակցության ուժգնության ցուցանիշի դինամիկան 2010-2016 թվականների ընթացքում



Միաժամանակ նշենք, որ ներկայացված ցուցանիշները միջազգային համեմատությունների տեսանկյունից Հայաստանի համար ապահովում են շատ ավելի նպաստավոր դիրք, քան ունեն տարածաշրջանային և ԱՊՀ մասնակից որոշ պետություններ (տես՝ Հավելվածը):

Տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության իրականացման ընթացքում առանձնապես կարևորվում է ապրանքային շուկայում մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը: Միաժամանակ, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության կիրարկման տեսանկյունից հատուկ ուշադրության են արժանի տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկաներում մրցակցության սահմանափակման, կանխման և արգելման այն գործողությունները կամ վարքագիծը, որոնք կարող են հանգեցնել.

- մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահմանը,
- հակամրցակցային համաձայնությունների կնքմանը (կայացմանը),
- գործողության մեջ դրված չհայտարարագրված կամ արգելված համակենտրոնացմանը,
- անբարեխիղճ մրցակցության գործողությանը,
- արգելված պետական օժանդակությանը:

Մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման դեպքերի բացահայտման ուղղություն

Ապրանքային շուկաներում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների վարքագծի վերաբերյալ նախորդ տարիներին իրականացված Հանձնաժողովի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված սուբյեկտները կարող են օգտվել տնտեսական իրավիճակի փոփոխություններից և գերիշխող դիրքի չարաշահման ճանապարհով առավելության հասնել հնարավոր մրցակիցների նկատմամբ: Հանձնաժողովի կողմից վերջին շրջանում իրականացված մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների վարքագծին առնչվող մի շարք ուսումնասիրություններ, տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման տեսանկյունից, ունեն կարևոր նշանակություն:

Այսպես, Հանձնաժողովը գերիշխող դիրքի չարաշահում է արձանագրել «Շոկոլադե բատոններ» և «Շոկոլադե դրաժեներ» ապրանքային շուկաներում: Մասնավորապես, հիմք ընդունելով մամուլում շոկոլադե բատոնների ու դրաժենների իրացման գների իջեցման վերաբերյալ հրապարակումները, Հանձնաժողովն իրականացնել է ուսումնասիրություն նշված շուկաներում:

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզել է, որ նշված շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող «Սլավ Գրուպ» և «Դերժավա-Ս» փակ բաժնետիրական ընկերությունները իջեցրել են իրացվող ապրանքների գները, որը պայմանավորված չի եղել տնտեսական գործոններով: Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից մանրաձախ առևտրի օբյեկտներում իրականացված դիտանցումների արդյունքում արձանագրվել է, որ «Սլավ Գրուպ» և «Դերժավա-Ս» փակ բաժնետիրական ընկերությունները որոշ դեպքերում վերջիններիս պարտադրել են իրենց կողմից մատակարարվող ապրանքները սպառողներին իրացնել ցածր գներով: Հանձնաժողովի գնահատմամբ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից գների չիմնավորված իջեցումը և առևտրի օբյեկտների կողմից սպառողներին շուկուլադե ապրանքների իրացման գների ամրագրմանն ուղղված գործողությունները կարող են հանգեցնել դիտարկվող ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների շուկայից դուրս մղման, ինչպես նաև նշված գործողությունների հետևանքով շուկայում հնարավոր նոր մասնակցի մուտքը կարող է դառնալ տնտեսապես ոչ նպատակահարմար: Վերը նշված գործողությունները Հանձնաժողովը որակել է որպես գերիշխող դիրքի չարաշահում և կիրառել պատասխանատվության միջոց:


Մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումի հիման վրա Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել նաև օդային բեռնափոխադրումների բնագավառում: Համաձայն դիմումատու ընկերությունների, «Յումաքս» ՍՊ ընկերությունը ստիպում է իրենց DHL ցանցով փոխադրված ապրանքների մաքսային ձևակերպումներն իրականացնել իր հետ փոխկապակցված մաքսային միջնորդի միջոցով: Խնդրի կարևորությունը կայանում է նրանում, որ մաքսային միջնորդական գործունեություն իրականացնող անձինք «Յումաքս» ՍՊ ընկերության վարքագծի արդյունքում կարող են հայտնվել անհավասար մրցակցային պայմաններում և դուրս մղվել շուկայից: Հանձնաժողովն իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ «Յումաքս» ՍՊ ընկերությունը հանդիսանում է DHL ընկերության բացառիկ ներկայացուցիչը Հայաստանում և ունի մենաշնորհի դիրք դեպի Հայաստան և Հայաստանից արտերկիր DHL ցանցով ապրանքների փոխադրումների շուկայում: Ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ գործող մաքսային օրենսդրությամբ ապրանքների սեփականատերերը մաքսային ձևակերպումները կարող են իրականացնել անձամբ կամ մաքսային միջնորդի միջոցով: Ընդ որում, մաքսային միջնորդի ընտրությունը վերապահված է բացառապես ապրանքների սեփականատերերին և ապրանքներ փոխադրող անձինք իրավունք չունեն միջամտելու այդ գործընթացին: Իրականացված ուսումնասիրության արդյունքներով

«Յումաքս» ՍՊ ընկերության վարքագիծը համարվել է գերիշխող դիրքի չարաշահում և ընկերության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բենզինի շուկայի կենտրոնացվածությունը բարձր է և շուկայում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, Հանձնաժողովը 2016 թվականի ընթացքում ևս ուշադրության կենտրոնում է պահել բենզինի շուկան և իրականացրել համապատասխան ուսումնասիրություններ: Մասնավորապես, կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ 2016 թվականին ևս բենզինի շուկայում գործել են գերիշխող դիրք ունեցող «ՍիՓիԷս օյլ քորփորեյշն», «Ֆլեշ» և «Մաքս Պետրոլ» ընկերությունները, որոնց մասնաբաժինը ներմուծման կառուցվածքում կազմել է համապատասխանաբար 60, 34 և 6 տոկոս (տես՝ Գծանկար N 4):

Գծանկար N 4

Բենզինի ներմուծման կառուցվածքը 2016 թվականին՝ ըստ ներմուծող ընկերությունների




Կատարված ուսումնասիրության համաձայն 2016 թվականի սեպտեմբեր ամսվանից սկսած հայաստանյան շուկայում արձանագրվել է գների նվազում, ինչի արդյունքում սեպտեմբեր ամսվա համեմատ բենզինի մանրածախ գները մինչև 2017 թվականի հունվար ամիսն աստիճանաբար նվազել են շուրջ 50 դրամով՝ կազմելով 330 դրամ: Այնուհետև 2017 թվականի հունվար ամսվա վերջին բենզինի մանրածախ գները սկսել են բարձրանալ՝ մարտ ամսին կազմելով 370 դրամ: Վերը նշվածի կապակցությամբ Հանձնաժողովի կողմից դիտարկվել են բենզին ներմուծող ընկերությունների ձեռքբերման գները, առկա պաշարների մնացորդային արժեքները, բենզինի միջազգային գները և այլ ցուցանիշները, որի արդյունքում պարզվել է, որ տեղի ունեցած գնային

փոփոխությունները պայմանավորված են եղել բենզինի ձեռքբերման գների փոփոխություններով: Մասնավորապես, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 2017 թվականի հունվար ամսին՝ 2016 թվականի սեպտեմբեր ամսվա համեմատ ներմուծված 1 լիտր բենզինի ձեռքբերման գները նվազել են 50 դրամով, որի հետևանքով մանրածախ վաճառքի գներն այդ չափով նվազել են, իսկ արդեն փետրվար ամսին՝ հունվար ամսվա համեմատ 1 լիտր բենզինի ձեռքբերման գները բարձրացել են շուրջ 50 դրամով, որի հետևանքով բենզինի մանրածախ վաճառքի գները բարձրացել են գրեթե 40 դրամով (տես՝ Գծանկար N 5):

Գծանկար N 5

Ներմուծող ընկերությունների կողմից մեկ լիտր բենզինի ձեռքբերման և իրացման գների դինամիկան 2016 հունվար-2017 փետրվար ժամանակահատվածում



Ըստ էության, գնային համադրելի փոփոխություններ եղել են նաև բենզինի միջազգային շուկաներում, իսկ ՀՀ-ում բենզինի ներմուծմամբ և իրացմամբ զբաղվող խոշոր ընկերությունների գործունեության ուսումնասիրության արդյունքում մրցակցային օրենսդրության խախտումներ չեն բացահայտվել:

Հակամրցակցային համաձայնությունների կնքման (կայացման) բացահայտման ուղղություն

Հանձնաժողովի փորձը ցույց է տալիս, որ մասնակիցների փոքր թիվ և բարձր կենտրոնացվածություն ունեցող ապրանքային շուկաներում գործող խոշոր տնտեսվարող

սուբյեկտները, հնարավոր մրցակիցների նկատմամբ առավելության հասնելու և շահութաբերության զգալի մակարդակ ապահովելու նպատակով, կարող են միմյանց հետ կնքել հակամրցակցային համաձայնություններ՝ խաթարելով մրցակցային միջավայրի ձևավորման և մրցակցության զարգացման հեռանկարները: Հակամրցակցային համաձայնությունների բացահայտման նպատակով Հանձնաժողովը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում պետական գնումների ոլորտը: Պետական գնումների գործընթացում տեղի ունեցող հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը և կանխարգելումը նպաստում է այդ ոլորտի կարգավորմանը, շուկայի մասնակիցների բնականոն գործունեության համար անհրաժեշտ մրցակցային միջավայրի ապահովմանը, պետական միջոցների արդյունավետ օգտագործմանը և սպառողների շահերի պաշտպանությանը:

Այս ուղղությամբ Հանձնաժողովը իրականացրել է ուսումնասիրությունները բժշկական, սոցիալական, կրթական և այլ ոլորտներում գործող տասնյակ պետական մարմինների, համայնքների կողմից կազմակերպված մրցույթների վերաբերյալ, որոնց արդյունքում բացահայտված երևույթները թեև մրցակցության օրենսդրության տեսանկյունից հակամրցակցային համաձայնություններ չեն հանդիսացել, այդուհանդերձ դրանք կարող են ազդել մրցույթներում ազատ և արդար մրցակցային միջավայրի ձևավորման վրա:

Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից բժշկական հաստատությունների (հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ և այլն) պետական գնումների մի շարք մրցույթների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են հետևյալ խնդիրները.

1. Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ եղել են դեպքեր, երբ մրցույթների հրավերներում բժշկական հաստատությունները նշել են կոնկրետ ապրանքային նշանով ապրանքներ, կամ էլ գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմել են այնպես, որ դրանց համապատասխանել են կոնկրետ ներմուծող կամ արտադրող ընկերության ապրանքները: Միաժամանակ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մրցակցության սահմանափակումը դրսևորվել է մրցութային հրավերներում ապրանքները կոնկրետ չափի տուփերով, պարկերով և այլ չափման միավորներով նշելու եղանակով: Այսպես, օրինակ, բժշկական հաստատությունը նշել է, որ ձեռքբերվող դեղի յուրաքանչյուր տուփում պետք է լինի 14 հաբ, մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թեև առկա են նշված դեղ արտադրող և ներմուծող մի շարք տնտեսվարող սուբյեկտներ, այդուհանդերձ տուփերում 14 հաբի պարունակությամբ շուկայում առկա է միայն մեկ ապրանքային նշանով դեղ:

2. Հաստատությունների կողմից որոշ ծառայություններ ձեռք են բերվել ոչ մրցութային եղանակով: Մասնավորապես, փոքր և միջին ծավալներ ունեցող բժշկական հաստատությունները, որոնք օբյեկտիվորեն իրենց հաստատության տարածքում չեն կարող բնակչությանը մատուցել անհրաժեշտ բոլոր տեսակի ծառայությունները, քանի որ չունեն նեղ մասնագիտացված մասնագետներ (սրտաբան, նյարդաբան, ակնաբույժ և այլն), այդ ծառայությունները ձեռք են բերել ոչ մրցութային եղանակով՝ խոշոր բժշկական հաստատություններից:

3. Պարզվել է նաև, որ որոշ մրցույթներում մրցակցություն չի եղել (մրցույթին մասնակցել և հաղթել է միայն մեկ ընկերություն)՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կան ապրանքներ, որոնք մատակարարվում են միայն մեկ ընկերության կողմից: Մասնավորապես, խնդիրը հիմնականում վերաբերում է լաբորատոր փորձաքննության համար անհրաժեշտ նյութերի (թեստերի) ձեռքբերմանը: Համաձայն ուսումնասիրության արդյունքների, բժշկական հաստատություններում առկա լաբորատոր փորձաքննության սարքավորումները (անալիզատորներ) աշխատում են միայն տվյալ ապրանքային նշանի նյութերով, ինչի արդյունքում բժշկական հաստատությունները չունեն այլ ապրանքային նշանի նյութեր ձեռքբերելու այլընտրանք: Այս կապակցությամբ Հանձնաժողովի կողմից բացահայտվել է նաև մեխանիզմ, երբ բժշկական հաստատությանը լաբորատոր փորձաքննության սարքավորումները տրամադրվել են անվճար՝ հետագայում նշված հաստատությանը նյութերի ձեռքբերման հարցում դնելով կախվածության մեջ:

4. Տարբեր բժշկական հաստատությունների կողմից համադրելի ժամանակահատվածում միևնույն ապրանքները ձեռք են բերվել էականորեն տարբեր գներով, որը պայմանավորված է նրանով, որ հաստատությունները հաճախ մրցույթի ժամանակ չեն ունեցել հաստատված նախահաշվային գները և ինչպես բժշկական հաստատությունների, այնպես էլ այդ հաստատությունների վերադաս մարմինների կողմից հսկողություն չի իրականացվել ձեռքբերվող դեղերի գների նկատմամբ:

Սոցիալական հաստատությունների կողմից իրականացված մրցույթների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից որոշ մրցույթների մասով բացահայտվել են հետևյալ խնդիրները.

1. Մրցույթների հրավերներում առկա են եղել առևտրային նշաններին և ֆիրմային անվանումներին կատարված հղումներ, ինչի արդյունքում մրցույթներին հնարավորություն են

ունեցել մասնակցել միայն այդ առևտրային նշաններով և ֆիրմային անվանումներով ապրանքների մատակարար ընկերությունները:

2. Տարբեր սոցիալական հաստատությունների կողմից համադրելի ժամանակահատվածում միևնույն ապրանքները ձեռք են բերվել էականորեն տարբեր գներով, որը պայմանավորված է նրանով, որ հաստատությունները հաճախ մրցույթի ժամանակ չեն ունեցել հաստատված նախահաշվային գները և ինչպես սոցիալական հաստատությունների, այնպես էլ այդ հաստատությունների վերադաս մարմինների կողմից հսկողություն չի իրականացվել ձեռքբերվող ապրանքների գների նկատմամբ:

Ինչ վերաբերում է կրթական հաստատությունների և համայնքների կողմից իրականացվող մրցույթներին, ապա ուսումնասիրությունների արդյունքում մի շարք մրցույթների դեպքում բացահայտվել են երկու խումբ խնդիրներ.

1. Գնումներն իրականացվել են ոչ մրցակցային եղանակով, որի արդյունքում պետական մարմինները մրցույթ իրականացնելու փոխարեն գնման առարկաները ձեռք բերելու նպատակով պայմանագրեր են կնքել առանձին տնտեսվարող սուբյեկտների հետ՝ դրանով իսկ սահմանափակելով այլ տնտեսվարող սուբյեկտների մասնակցությունը գնման գործընթացներին և սահմանափակելով մրցակցությունը:

2. Մրցույթների հրավերներում առկա են եղել առևտրային նշաններին և ֆիրմային անվանումներին կատարված հղումներ, ինչի արդյունքում մրցույթներին հնարավորություն են ունեցել մասնակցելու միայն այդ առևտրային նշաններով և ֆիրմային անվանումներով ապրանքների մատակարար ընկերությունները:

Բացի այդ, Հանձնաժողովի կողմից գնումների ոլորտում նախկինում հակամրցակցային համաձայնությունների և մրցակցությունը սահմանափակող երևույթների բացահայտման և կանխարգելման նպատակով իրականացվող ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են մի շարք խնդիրներ, որոնք Հանձնաժողովի հետևողականության շնորհիվ ներկայումս գտնվում են լուծման փուլում: Դրանք առնչվել են գնումների ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի անկատարությանը, գնման ընթացակարգերի վերաբերյալ ամբողջական և համակարգված տեղեկատվության բացակայությանը, էլեկտրոնային գնումների համակարգի արդյունավետության բարձրացմանը և դրա ներդրման շրջանակների ընդլայնմանը: Բացահայտված խնդիրների առնչությամբ Հանձնաժողովի կողմից իրավասու պետական մարմիններ են ներկայացվել օրենսդրական փոփոխություններ իրականացնելու և գնման

գործընթացների կազմակերպման արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ: Դրանց արդյունքում ներկայումս.

1. Էապես բարձրացել է www.gnumner.am կայքի և ARMEPS համակարգի գործառնման արդյունավետությունը: Հնարավոր է դարձել բոլոր շահագրգիռ կողմերին իրականացված գնման գործընթացների վերաբերյալ մեկ պատուհանի սկզբունքով հասանելի դարձնել ամբողջական և համակարգված տեղեկատվություն՝ ըստ որոշակի չափանիշների (օրինակ՝ ըստ ոլորտների, ապրանքների խմբերի, պատվիրատուների և այլն):

2. Օրենքով լրամշակվել է «փոխկապակցված անձ» հասկացությունը և արգելվել է այնպիսի կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, որոնք գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

3. Ներդրվել են մեխանիզմներ, որոնք ապահովում են գնումների բողոքարկման գործընթացներում ներգրավված կամ շահագրգիռ կողմերի շահերի իրավաչափ պաշտպանությունը: Ձևավորվել է գնումների բողոքարկման խորհրդի հանձնաժողովների անդամների ընտրության և վարձատրության գործուն օրենսդրական մեխանիզմ՝ բարձրացնելով բողոքարկման խորհրդի անկախությունը:

Համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության բացահայտման ուղղություն

Հանձնաժողովը, Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, հսկողություն է իրականացնում նաև տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումների գործարքների նկատմամբ: Այս ուղղությամբ Հանձնաժողովը հսկողություն է իրականացնում խոշոր ընկերությունների նկատմամբ, որոնք հասույթի կամ ակտիվների մեծությամբ գերազանցում են օրենսդրությամբ սահմանված շեմերը: Համակենտրոնացումների նկատմամբ հսկողություն իրականացնելով՝ Հանձնաժողովը նպատակ ունի բացահայտելու և համապատասխան ռիսկերի առկայության պարագայում թույլ չտալու, որպեսզի միևնույն շուկայում կամ միմյանց հետ փոխկապակցված շուկաներում գործունեություն իրականացնող կազմակերպությունները հայտնվեն միևնույն անձի և (կամ) կազմակերպության կառավարման ներքո այն դեպքերում, երբ գործարքի արդյունքում համապատասխան շուկայում կարող է սահմանափակվել մրցակցությունը: Ըստ էության, Հանձնաժողովի կողմից առանձնահատուկ ուշադրության են արժանանում հայտարարագրման ենթակա և տնտեսական մրցակցությունն էապես խոչընդոտող, այդ թվում՝ գերիշխող դիրքի հանգեցնող կամ գերիշխող դիրքն

ամրապնդող համակենտրոնացումները: Սահմանված ընթացակարգի համաձայն, մինչև համակենտրոնացումների գործողության մեջ դնելը պարտադիր է ստանալ Հանձնաժողովի թույլտվությունը: Սակայն Հանձնաժողովի կողմից վերջին տարիներին իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են բազմաթիվ ընկերություններ, որոնք սահմանված կարգով չեն ստացել Հանձնաժողովի թույլտվությունը և կատարել են համակենտրոնացման գործարքներ: Բացահայտված բոլոր դեպքերի առնչությամբ Հանձնաժողովը հարուցել է վարչական վարույթներ և կիրառել պատասխանատվության միջոցներ, ինչպես նաև աշխատանքներ է իրականացրել տնտեսվարող սուբյեկտների տնտեսական մրցակցության օրենսդրության դրույթների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման առումով, ինչի արդյունքում ներկայումս էապես նվազել են առանց Հանձնաժողովի թույլտվությունը ստանալու՝ համակենտրոնացման գործարքների իրականացման դեպքերը:

Միաժամանակ նշենք, որ համակենտրոնացումների նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման ուղղությամբ Հանձնաժողովի համար հասանելի չեն բաժնետիրական ընկերություններում կատարվող գործարքների վերաբերյալ տեղեկությունները: Մասնավորապես, բաժնետիրական ընկերությունների հիմնադիրների վերաբերյալ փոփոխությունները գրանցվում են ռեեստր վարող կազմակերպություններում, հետևաբար Հանձնաժողովի կողմից բաժնետիրական ընկերություններում կատարվող գործարքների, վերակազմակերպումների և վերջիններիս կողմից չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման համար տեղեկատվական աղբյուրները բացակայում են: Ըստ այդմ՝ Հանձնաժողովի տեսադաշտից դուրս են մնում «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերությունում և այլ ռեեստր վարող կազմակերպություններում արժեթղթերով կատարվող գործարքների և այդ գործարքները կատարած անձանց վերաբերյալ տվյալները, և Հանձնաժողովը, ըստ էության, զրկված է նշված գործարքների նկատմամբ վերահսկողության իրականացման հնարավորությունից: Այս կապակցությամբ Հանձնաժողովը նախաձեռնել է օրենսդրական փոփոխություններ, որոնց ընդունման դեպքում Հանձնաժողովի համար բաժնետիրական ընկերություններում կատարվող գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը կդառնա հասանելի և առավել արդյունավետ կդարձնի համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողությունը: Հանձնաժողովը 2018 թվականի ծրագրային տարում շարունակելու է ուսումնասիրությունները ինչպես տնտեսվարող սուբյեկտների կողմից նոր գործարքների կայացման ուղղությամբ, այնպես էլ նախկինում

չհայտարարագրված համակենտրոնացման գործարքները բացահայտելու և տվյալ շուկայում դրանց ունեցած ազդեցությունը գնահատելու ուղղությամբ:

Անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտման ուղղություն

Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացնում նաև անբարեխիղճ մրցակցության գործողություններ կատարող տնտեսվարող սուբյեկտներին բացահայտելու և նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ: Հանձնաժողովի կողմից նախկինում իրականացված ուսումնասիրությունները փաստում են, որ անբարեխիղճ մրցակցությունը հիմնականում դրսևորվում է հասարակության մոլորեցման միջոցով, երբ տնտեսվարող սուբյեկտներն ապրանքների մակնշման և գովազդի գործընթացներում օգտագործում են թերի, կեղծ և ոչ լիարժեք տեղեկատվություն, ինչպես նաև հասարակության շփոթեցման միջոցով, երբ տնտեսվարող սուբյեկտներն իրենց ապրանքները շփոթության աստիճանի նմանեցնում են այլ ընկերությունների ապրանքներին:

Հանձնաժողովի կողմից վերը նշված խնդիրներն առավել առարկայական ցույց տալու համար ներկայացնենք հետևյալ դեպքերը:

Հանձնաժողովը ուսումնասիրություն է իրականացրել «Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Կազմակերպությունը դիմումում նշել է, որ բջջային հեռախոսների վաճառքով զբաղվող «Մոբայլ Սենթր Արթ» ՍՊ ընկերությունն իրականացնում է գովազդ, որի համաձայն ապառիկ եղանակով հեռախոսների ձեռքբերման դեպքում գործում է Օ տոկոս կանխավճար, Օ տոկոս տոկոսադրույք, և նշել է, որ հեռախոսներն ապառիկ եղանակով ձեռքբերման դեպքում գները մնում են անփոփոխ, սակայն իրականում բանկերի կողմից գանձվում են լրացուցիչ վճարներ: Այս կապակցությամբ Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ընկերությունն առավել մեծ թվով սպառողներ ներգրավելու նպատակով գովազդի շրջանակներում ներկայացրել է ակցիային վերաբերող միայն դրական կողմերը: Մասնավորապես, ընկերությունը չի ներկայացրել այնպիսի կարևոր տեղեկատվություն, ինչպիսին է ապառիկ եղանակով հեռախոսների ձեռքբերման դեպքում բանկերի կողմից գանձվող ամսական միջնորդավճարը, ինչը հանգեցնում է ապրանքի գնի բարձրացմանը և կարևոր նշանակություն կարող է ունենալ սպառողների ընտրության հարցում:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրություն է իրականացվել նաև հեռուստատեսային գովազդի միջոցով կենցաղային ապրանքների վաճառք իրականացնող «Թիվի Տոն» ՍՊ

ընկերության դիմումի հիման վրա: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հեռուստատեսային գովազդի միջոցով ապրանքների վաճառք իրականացնող մեկ այլ ընկերություն՝ «Տելեմարկետ» ՍՊԸ-ն, «ԹիՎի Տոն» ՍՊ ընկերության կողմից նոր ապրանքի առաջարկի դեպքում, անմիջապես սկսել է գովազդել նշված ապրանքները, թեև նման ապրանքներ գովազդի պահին չի ունեցել: «ԹիՎի Տոն» ՍՊ ընկերության դիրքորոշման համաձայն նման վարքագծի նպատակը իրենց գործունեության խաթարումն ու շուկայից դուրս մղելն է: Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ «Տելեմարկետ» ընկերության պաշտոնական կայքում (www.telemarket.am) և ֆեյսբուքյան էջում (Telemarket) ապրանքների գովազդման ընթացքում ապրանքների առաքման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել, որը սպառողի կողմից որոշում կայացնելու հարցում ունի էական նշանակություն: Միաժամանակ պարզվել է, որ «Տելեմարկետ» ընկերությունը հաճախ չի կարողացել ապահովել նշված պատվերների իրականացումը՝ դրանով իսկ վնաս հասցնելով «ԹիՎի Տոն» ՍՊ ընկերության բնականոն գործունեությանը: Հանձնաժողովը «Տելեմարկետ» ընկերության նման վարքագիծը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում:

Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շուկաներում մրցակցային արդյունավետ միջավայրի ձևավորման վրա կարևոր ազդեցություն ունի նաև մտավոր սեփականության իրավունքների գրանցման համակարգը: Տնտեսվարող սուբյեկտներից Հանձնաժողով ստացված բողոքների համաձայն եղել են դեպքեր, երբ ապրանքային նշանները և արդյունաբերական նմուշները գրանցվել են շուկայում գործող այլ տնտեսվարող սուբյեկտներին շուկայից դուրս մղելու նպատակով:

Այսպես, Հանձնաժողով է դիմել «Վալլետտա» ընկերությունը՝ ներկայացնելով դիմում-բողոք «Բուրգեր Արմ» ՍՊ ընկերության դեմ՝ հայտնելով, որ «BURGER KING» ապրանքային նշանը Հայաստանում պատկանում է իրեն և խնդրել է Հանձնաժողովին արգելել վերոնշյալ ընկերության կողմից «BURGER KING» անվանման օգտագործումը՝ այն համարելով անբարեխիղճ մրցակցություն: Այս խնդրի կարևորությունը կայանում է նրանում, որ լինում են դեպքեր, երբ հանրաճանաչ ապրանքային նշանի իրական իրավատերերը չեն կարողանում մուտք գործել շուկա այն պատճառով, որ իրենց պատկանող ապրանքային նշանը գրանցված է այլ ընկերությունների կողմից: Ըստ էության, առաջանում են շուկա մուտք գործելուն վերաբերող ռիսկեր: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ այս ապրանքային նշանը օգտագործվում է 1954 թվականից սկսած, պատկանում է ամերիկյան «Բուրգեր Քինգ Քորպորեյշն» ընկերությանը, որը ֆրանչայզինգի պայմանագրով հնարավորություն է տալիս այն շահագործել նաև այլ երկրներում

այլ ընկերությունների կողմից: Հայաստանում «Բուրգեր Քինգ Քորպորեյշն» ընկերության բացառիկ ներկայացուցիչ է հանդիսանում «Բուրգեր Արմ» ընկերությունը, որը ֆրանչայզինգի պայմանագրի հիման վրա «Դալմա Գարդեն Մոլ» զվարճաառևտրային համալիրում զբաղվում է արագ սննդի պատրաստմամբ և իրացմամբ: «Բուրգեր Արմ» ընկերությունը, ունենալով ֆրանչայզինգի պայմանագիր, Հայաստանում գրանցել է նաև «BURGER KING» ապրանքային նշանը: Միաժամանակ պարզվել է, որ «Վալլետտա» ընկերությունը ևս գրանցել է այդ ապրանքային նշանը, սակայն որևէ առնչություն չունի «Բուրգեր Քինգ Քորպորեյշն» ընկերության հետ: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում որոշում է ընդունվել մերժել «Վալլետտա» ընկերության բողոքը՝ ընդդեմ «Բուրգեր Արմի», քանի որ «Բուրգեր Արմ» ընկերության գործունեության մեջ անբարեխիղճ որևէ գործողության և վարքագիծ առկա չէ, և ընկերությունը իրավունք ունի օգտագործել այս ապրանքային նշանը:

Նշենք նաև, որ վերը ներկայացված գործերը հանդիսանում են ընդամենը օրինակներ մրցակցության պաշտպանության բնագավառում առկա խնդիրները ներկայացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2018 թվականի ընթացքում ևս Հանձնաժողովը կշարունակի նշված խնդիրների ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքների իրականացումը:

Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության արդյունքում բացահայտված այլ խնդիրներ

Մրցակցային արդյունավետ միջավայրի ձևավորման հարցում էապես կարևորվում է արդար և հավասար վարչարարության իրականացումը բիզնես համայնքի գործունեությանն առնչվող բոլոր մարմինների կողմից: Հանձնաժողովը կատարվող ուսումնասիրությունների ընթացքում մեծ կարևորություն է տալիս հատկապես շուկաներում մուտքի խոչընդոտների բացահայտմանը, հավասար մրցակցային միջավայրի ձևավորմանը և մրցակցությունը սահմանափակող հնարավոր երևույթների վերացմանն առնչվող խնդիրներին: Համաձայն Հանձնաժողովի կողմից իրականացված բավականին մեծ թվով ուսումնասիրությունների արդյունքների՝ հաճախ հավասար մրցակցությունը խաթարող գործոնների վերացման խնդիրը գտնվում է այլ պետական մարմինների իրավասությունների շրջանակներում, հետևապես առկա խնդիրների լուծման շուրջ համագործակցությունն անհրաժեշտություն է: Ըստ այդմ, վերջին տարիներին Հանձնաժողովը համագործակցության շրջանակներում իրավասու պետական մարմիններին տրամադրել է տրանսպորտի, պետական գնումների, առողջապահության, շինարարության, ծառայությունների

և այլ ոլորտներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված խնդիրների լուծման և կանխման վերաբերյալ առաջարկություններ:

Այսպես, կարևորելով մրցակցության խրախուսումը դեղերի շուկայում՝ Հանձնաժողովը նախատեսում է շարունակել աշխատանքները Հայաստանի Հանրապետությունում զուգահեռ ներմուծման համակարգի լիարժեք ներդրման և կիրառման ուղղությամբ: Դեղերի «զուգահեռ ներմուծման» համակարգի ներդրումը կարևորվում է նրանով, որ այն հնարավորություն է տալիս տնտեսվարող սուբյեկտներին առավել մատչելի գներով դեղեր ներմուծել ՀՀ տարածք՝ ոչ անմիջապես այդ դեղերն արտադրող ընկերություններից և նրանց ներկայացուցիչներից: Հարկ է նշել, որ Հանձնաժողովը «զուգահեռ ներմուծման» գործընթացների վերաբերյալ նախկինում ևս իրականացրել է մի շարք ուսումնասիրություններ և դրանց արդյունքում բացահայտված խնդիրների, դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների վերաբերյալ լիազոր մարմիններ է ներկայացրել համապատասխան առաջարկություններ: Վերոգրյալի արդյունքում չնայած «Դեղերի մասին» նոր օրենքում ներդրվել է դեղերի «զուգահեռ ներմուծման» ընթացակարգը, սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գործող օրենքում առկա են դրույթներ, որոնց պարագայում վերոնշյալ ընթացակարգի գործնական կիրառման համար ստեղծվում են խնդիրներ, ինչն իր հերթին սահմանափակում է մրցակցությունն այս ոլորտում և պատճառ հանդիսանում դեղերի շուկայում բարձր գների ձևավորման համար: Ուստի Հանձնաժողովը շարունակելու է հետևողական աշխատանքներն այս ուղղությամբ՝ խնդրի լիարժեք կարգավորման և «զուգահեռ ներմուծման» համակարգի ամբողջական ներդրման նպատակով:

Հանձնաժողովը տնտեսվարող սուբյեկտից ստացված դիմումի հիման վրա ուսումնասիրել է նաև բժշկական հաստատություններին պետական պատվերների շրջանակում ֆինանսավորման տրամադրմանը վերաբերող հարցերը: Մասնավորապես, դիմումատու ընկերությունը նշել է, որ պետական պատվերների շրջանակներում ֆինանսավորումը միմյանց մրցակից բժշկական հաստատությունների միջև պետության կողմից բաշխվում է անհամաչափորեն: Հանձնաժողովը կատարված ուսումնասիրության արդյունքում պարզել է, որ գործող մեխանիզմը, որի համաձայն պետության կողմից բժշկական հաստատությունների ֆինանսավորումը կատարվում է հիմնականում հաշվի առնելով նրանց կողմից նախկին տարիներին պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը, բժշկական հաստատությունների միջև չի ապահովում հավասար մրցակցային պայմաններ, չի նպաստում նրան, որ բժշկական հաստատությունները կատարեն նոր ներդրումներ և մատուցեն ավելի բարձրորակ ծառայություններ: Վերը նշվածը հաշվի առնելով, միջազգային փորձի ուսումնասիրության հիման

վրա Հանձնաժողովը դիմել է պետական շահագրգիռ մարմիններին՝ առաջարկելով պետական պատվերի շրջանակում ֆինանսավորումն իրականացնել հետվճարային սկզբունքով, որի համաձայն հիվանդն ինքը կարող է ընտել այն բուժհաստատությունը, որտեղ կստանա իրեն անհրաժեշտ համապատասխան ծառայությունները, և դրանից հետո միայն տվյալ բժշկական հաստատությունը կֆինանսավորվի փաստացի մատուցած ծառայությունների դիմաց:

Հանձնաժողովը միջազգային համագործակցության շրջանակներում աշխատանքներ է իրականացրել նաև ԵԱՏՄ տարածքում հայկական ապրանքների ներկայացվածության խոչընդոտները վերացնելու ուղղությամբ: Այսպես, Հանձնաժողովի կողմից իրականացված ակտիվ աշխատանքի արդյունքում հնարավոր է դարձել ապահովել հայկական ծխախոտի խոշորագույն արտադրող «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ ընկերության արտադրանքի անարգել ներկայացվածությունը ՌԴ շուկայում: Մասնավորապես, Հանձնաժողով է դիմել «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ ընկերությունը հայտնելով, որ «Ֆիլիպ Մորիս Բրեդս Սարլ» ընկերությունը, համաձայնության գալով Ռուսաստանի Դաշնության մի շարք խոշոր սուպերմարկետների հետ, փորձում է խոչընդոտել հայկական արտադրանքի իրացմանը՝ պնդելով, որ հայկական «Ararat» ծխախոտի վրա մակնշված ապրանքային նշանը շփոթության աստիճանի նման է իրենց կողմից արտադրվող «Marlboro» ծխախոտի վրա մակնշված ապրանքային նշանին: Բացի այդ, նշված խնդրի կապակցությամբ «Ֆիլիպ Մորիս Բրեդս Սարլ» ընկերությունը ՌԴ-ում դիմել է դատարան՝ նպատակ ունենալով նշված ապրանքային նշանների շփոթության աստիճանի նմանությունն ամրագրել դատական ակտով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդիրն առաջացել է ԵԱՏՄ անդամ այլ պետության տարածքում, Հանձնաժողովը համագործակցել է ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության հետ, որի արդյունքում, ռուսաստանյան գործընկերները ևս ներգրավվել են խնդրի կարգավորման և հայկական արտադրողի շահերի պաշտպանության գործում: ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության և Հանձնաժողովի համագործակցության շրջանակում կատարվել են համատեղ ուսումնասիրություններ, որոնց արդյունքում ամրագրվել է, որ «Գրանդ Տոբակոն» մրցակցային կամ հակամենաշնորհային օրենսդրության որևէ խախտում չի կատարել, գործել է բարեխիղճ և արդար մրցակցային կանոններով: Հանձնաժողովի նախաձեռնությամբ ՌԴ մրցակցային մարմինը ներգրավվել է նաև դատական գործընթացում և ներկայացրել Հանձնաժողովի հետ համատեղ կատարված ուսումնասիրության արդյունքում ձևավորված միասնական դիրքորոշումը: Արդյունքում, Մոսկվայի արբիտրաժային դատարանը ամբողջովին պաշտպանել է Հայաստանի և ՌԴ մրցակցային մարմինների դիրքորոշումը՝ մերժելով «Ֆիլիպ

Մորիս Բրեդս Սարլ» ընկերության հայցը և դատական կարգով ամրագրելով, որ «Գրանդ Տորակո» հայ-կանադական Հ/Ձ ընկերության գործողությունների մեջ որևէ հակամրցակցային տարր չկա. երկու ընկերությունների ապրանքային նշանները չեն կարող համարվել շփոթության աստիճանի նման, քանի որ բոլոր հատկանիշներով դրանք միմյանցից էականորեն տարբեր են:

Նմանօրինակ մեկ այլ խնդիր վերաբերում է «Մարիաննա» ապրանքային նշանի օգտագործմանը: Այսպես, Հանձնաժողով է դիմել «Դուստր Մարիաննա» ՍՊ ընկերությունը՝ հայտնելով, որ խոչընդոտների է հանդիպում ՌԴ-ում իր արտադրանքի իրացման գործընթացում: Հանձնաժողովի և ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության կողմից իրականացված համատեղ ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ ռուսական «Դեբոր» ընկերությունը գրանցել է «Մարիաննա» ապրանքային նշանը ՌԴ տարածքում դեռևս 2009 թվականին մի շարք ապրանքատեսակների, այդ թվում նաև կաթնամթերքի մասով: Իրականացված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ռուսական ընկերությունը մինչ օրս նման ապրանքային նշանով որևէ կաթնամթերք չի արտադրել, սակայն փորձում է խոչընդոտել հայկական ապրանքների մուտքը ՌԴ շուկա: Վերը նշվածից ելնելով ՌԴ դաշնային հակամենաշնորհային ծառայության կողմից «Դեբոր» ընկերության նման վարքագիծը, որը հանգեցնում է մրցակցության սահմանափակմանը և մուտքի խոչընդոտներ է ստեղծում շուկայի մյուս մասնակիցների համար, որակվել է որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում, ինչի արդյունքում «Դուստր Մարիաննա» ընկերությունը հնարավորություն է ստացել անարգել արտահանելու իր ապրանքատեսականին և իրացնելու ՌԴ տարածքում:

Հանձնաժողովն աշխատանքներ է իրականացնում նաև ապրանքներ արտադրող (ներմուծող) և ապրանքներ ձեռքբերող և (կամ) իրացնող տնտեսվարող սուբյեկտների միջև ապրանքների մատակարարմանը վերաբերող որոշ խնդիրներ լուծելու ուղղությամբ: Այդ նպատակով կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խոշոր արտադրող (ներմուծող) ընկերությունների կողմից ապրանքների իրացման, ինչպես նաև խոշոր առևտրային ցանցերի կողմից ապրանքների ձեռքբերման հստակ և հրապարակային չափանիշների բացակայությունը կարող է անհավասար մրցակցային պայմաններ ստեղծել շուկայում գործող մրցակից ընկերությունների համար, ինչպես նաև հանգեցնել կոնկրետ ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի խաթարմանը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մրցակցային մարմինները նշված խնդիրները փորձում են կարգավորել նաև առանձին ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար բարեխիղճ վարքագծի կանոնների ներդրման միջոցով: Նշված վարքագծի կանոնները

նախատեսում են ապրանքների մատակարարմանը վերաբերող հարցերի հստակեցում (մատակարարների ընտրության չափանիշներ, մատակարարների հետ գործարքների կնքմանը ներկայացվող պահանջներ, ապրանքների համար վճարման պայմաններ, զեղչերի, այլ արտոնությունների տրամադրման չափորոշիչներ և այլն), միտված են կանխարգելելու համապատասխան ոլորտներում առկա կոռուպցիոն ռիսկերը և մրցակցային միջավայրը խաթարող պայմանավորվածությունները: Այս ուղղությամբ Հանձնաժողովն արդեն իսկ մշակել և ներդրել է «Դեղագործության ոլորտում ձեռնարկատիրական գործունեության բարեխիղճ վարքագծի կանոնների» կանոնագիրքը, որը նպաստում է դեղերի շրջանառության ոլորտում գործող ընկերությունների հարաբերությունների կանոնակարգմանը և փոխգործակցության ամրապնդմանը: Նշենք նաև, որ աշխատանքները շարունակվում են՝ այլ ոլորտներում ևս նման կանոնագրքերի մշակման և ներդրման ուղղությամբ:

II. Տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը

Հանձնաժողովը, հիմք ընդունելով տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրները, օգտվելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակված փորձից, ծրագրում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք կապահովեն ծրագրային տարում ամրագրված նպատակների արդյունավետ իրագործման խնդրի լուծումը: Մասնավորապես, դրանք ուղղված են մրցակցային միջավայրի ձևավորմանը, մրցակցային մշակույթի բարելավմանը, հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, այլ պետական մարմինների և միջազգային կառույցների հետ համագործակցությանը և այլն: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հանձնաժողովը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով ուսումնասիրությունների իրականացում՝ առավելապես ուշադրություն դարձնելով մրցակցային անհավասար պայմանների առաջացման, տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ խտրական պայմանների կիրառման, տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտման կամ շուկայից դուրս մղման հետ կապված հարցերին,

- պետական գնումների ոլորտում մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման, ինչպես նաև առանձին մրցույթներում հնարավոր մուտքի խոչընդոտների բացահայտման ուղղություններով ուսումնասիրությունների իրականացում,

- համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակով ուսումնասիրությունների իրականացում, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալության էլեկտրոնային ռեգիստրի հետևողական դիտարկումների կատարում՝ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման և առկա խնդիրների լուծման համար,

- անբարեխիղճ մրցակցության դրսևորումների՝ տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթության առաջացման, տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վարկաբեկման, հասարակության մոլորեցման, տնտեսվարող սուբյեկտի համբավի կամ վարկարժեքի վնասման դեպքերի բացահայտման և վերացման նպատակով

ուսումնասիրությունների իրականացում մի շարք ոլորտներում՝ մշտական ուշադրության կենտրոնում պահելով սուբյեկտների կողմից իրականացվող զեդչերի, տարբեր տեսակի ակցիաների, բոնուսների արդյունքում առաջացած անբարեխիղճ մրցակցության դրսևորման հնարավոր դեպքերի բացահայտումը,

- մրցակցային մշակույթի բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացում, այդ թվում՝ հասարակության լայն շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացման ապահովում՝ բացահայտված իրավախախտումների վերաբերյալ հրապարակային նիստերի անցկացման, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և բիզնես ոլորտի, այդ թվում զանգվածային լրատվության միջոցների և շահագրգիռ այլ մարմինների հետ համագործակցության իրականացման, Հանձնաժողովին կից հասարակական խորհրդի նիստերի անցկացման, բարձրացված մրցակցային հարցերի քննարկման և տվյալ ուղղությամբ ուսումնասիրությունների անցկացման միջոցով,

- սոցիալական նշանակության և բարձր կենտրոնացվածություն ունեցող ապրանքային շուկաներում (այդ թվում՝ շաքարավազի, ցորենի, բենզինի շուկաներում) մրցակցային իրավիճակի վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացում,

- ծառայությունների ոլորտներում ուսումնասիրությունների իրականացում՝ նպատակ ունենալով բացահայտել համապատասխան ոլորտներում ձևավորված մրցակցային միջավայրը և դրանց առնչվող խնդիրները,

- մրցակցային օրենսդրության վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունների, Հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքների և իրավասության շրջանակների լուսաբանման միջոցով,

- տնտեսական մրցակցության վրա ազդեցություն ունեցող օրենսդրական փոփոխությունների իրականացման աշխատանքներին Հանձնաժողովի մասնակցության ապահովում,

- մրցակցային միջավայրի բարելավման նպատակով միջազգային համագործակցության ապահովում՝ ինչպես մրցակցության ոլորտի հարցերով զբաղվող միջազգային կառույցների և կազմակերպությունների, այնպես էլ այլ երկրներում մրցակցության պաշտպանությամբ զբաղվող պետական մարմինների հետ կատարվող աշխատանքների միջոցով՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով համապատասխան փորձագետների,

- մրցակցային միջավայրի բարելավման ուղղությամբ միջազգային համագործակցության շրջանակներում համապատասխան աշխատանքների իրականացում ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ փոխգործակցության ամրապնդման ուղղությամբ միջոցառումների իրագործում, այդ թվում՝ տեղեկատվության փոխանակում, համատեղ նիստերի իրականացում, փոխադարձ հետաքրքրության և սոցիալական նշանակություն ունեցող ապրանքային շուկաներում համատեղ ուսումնասիրությունների իրականացում և մրցակցային միջավայրի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակման աշխատանքներին ակտիվ մասնակցության ապահովում,

- մրցակցային արդյունավետ միջավայրի ձևավորման նպատակով համագործակցություն այլ պետական մարմինների հետ՝ անհավասար մրցակցային իրավիճակ ձևավորող գործոնների վերացման ուղղությամբ համատեղ աշխատանքներ կատարելու նպատակով,

- Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում:

Հանձնաժողովը վերը ներկայացված միջոցառումները նախատեսում է իրականացնել 2018 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:

III. Տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները

Տնտեսական մրցակցության պաշտպանության իրականացման խնդրի համար անկյունաքար են հանդիսանում տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմները, որոնց անմիջական գործադրմամբ կարգավորվում են մրցակցության խնդիրները: Նշված մեխանիզմները սահմանվում են համաձայն իրականացվող մրցակցային քաղաքականության և գործում են Հանձնաժողովի իրավասությունների շրջանակներում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ծրագրի իրականացման համար նախատեսված, տնտեսական մրցակցության կարգավորման մեխանիզմներն են.

1. տնտեսական մրցակցության իրավիճակի բացահայտմանն ուղղված ուսումնասիրությունների իրականացում՝ բարձր կենտրոնացվածության և սոցիալական նշանակության ապրանքային շուկաներում,

2. տեղեկատվության հավաքագրում՝ տնտեսվարող սուբյեկտների գործունեության և մրցակցային վարքագծի ուսումնասիրությունների ընթացքում, այդ թվում՝ հսկիչ գնումների, դիտանցումների և ստուգումների իրականացման արդյունքում,

3. տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության կիրառման վերաբերյալ պարզաբանումների տրամադրում և հանրության իրազեկման նպատակով դրանց տեղադրում Հանձնաժողովի ինտերնետ կայքում,

4. եզրակացությունների տրամադրում՝ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ընդունված ակտերի, այլ փաստաթղթերի (կազմակերպված մրցույթների վերաբերյալ որոշումներ, արձանագրություններ և այլն)՝ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրությանը հակասելու, ինչպես նաև մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող սուբյեկտի վարքագծի, կնքվող համաձայնությունների, պետական օժանդակությունների, ինչպես նաև համակենտրոնացումների արդյունքում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների խաթարման վերաբերյալ,

5. գործարարների հետ հանդիպումների անցկացում, մրցակցային օրենսդրության վերաբերյալ հարցերի քննարկում, խորհրդատվական բնույթ կրող աշխատանքների իրականացում՝ խախտումների հնարավորինս կանխարգելման նպատակով,

6. պատասխանատվության միջոցների կիրառում՝ մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահման, հակամրցակցային համաձայնությունների կայացման, անբարեխիղճ

մրցակցության գործողության դրսևորման, արգելված համակենտրոնացումները գործողության մեջ դնելու, արգելված պետական օժանդակության տրամադրման դեպքերում,

7. Օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ զգուշացման կիրառում՝ տնտեսվարող սուբյեկտներին, պետական մարմիններին կամ դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կանխման նպատակով,

8. Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված պետական այլ մարմինների կարգավորման տիրույթում գտնվող մրցակցային խնդիրների վերահասցեագրում՝ դրանց լուծման նպատակով,

9. միջազգային համագործակցության շրջանակներում գործընկեր երկրների մրցակցային մարմինների հետ համատեղ ուսումնասիրությունների իրականացում,

10. տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից Օրենքի խախտումների դադարեցում կամ դրանց հետևանքների վերացում և սկզբնական վիճակի վերականգնում,

11. Օրենքին հակասող պայմանագրերի փոփոխում կամ լուծում՝ մրցակցության պաշտպանության նպատակով,

12. համակենտրոնացման կամ պետական օժանդակության, պետական մարմինների, տնտեսվարող սուբյեկտների կամ դրանց պաշտոնատար անձանց հակամրցակցային գործողությունների կամ վարքագծի կասեցում՝ ընդունած ոչ իրավաչափ ակտերի լուծարում՝ մրցակցության պաշտպանության նպատակով,

13. պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների կողմից Օրենքի դրույթների կիրառման վերաբերյալ խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցների, այլ փաստաթղթերի հաստատում՝ մրցակցային օրենսդրության կիրառման իրազեկման և խորհրդատվության տրամադրման նպատակով,

14. վերահսկողության իրականացում՝ Հանձնաժողովի որոշումների կատարման (պահպանման) նկատմամբ,

15. ստուգման, ուսումնասիրության (այդ թվում՝ հսկիչ գնման և (կամ) դիտանցման) իրականացում՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտման կամ Հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակով:

IV. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ

Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մրցակցային իրավիճակի բարելավումը հնարավոր է ապահովել Հանձնաժողովի, պետական այլ մարմինների և հասարակության տարբեր խմբերի՝ գործարար համայնքը ներկայացնող կառույցների, լրատվամիջոցների, սպառողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ջանքերի մեկտեղման արդյունքում: Վերը նշվածը հաշվի առնելով՝ Հանձնաժողովի առաջարկությունները հետևյալն են.

1. Վերջին տարիներին իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովը բացահայտել է բազմաթիվ դեպքեր, երբ առանձին ոլորտները կարգավորող տարբեր իրավական ակտերով սահմանված ընթացակարգերը, պետական մարմինների կողմից իրականացվող վարչարարությունը բացասաբար է անդրադառնել շուկայում ձևավորված մրցակցային միջավայրի վրա: Հաճախ եղել են դեպքեր, երբ մրցակցային մարմինների կողմից բացահայտված խնդիրները գտնվել են պետական այլ մարմնի կարգավորման տիրույթում, թեև դրանց չկարգավորված լինելը մեծապես ազդել է մրցակցային միջավայրի վրա: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված բոլոր խնդիրների կապակցությամբ Հանձնաժողովը դիմել է շահագրգիռ պետական մարմիններին՝ իրենց կարգավորման տիրույթում գտնվող հարցերի լուծման նպատակով: Այս առումով, Հանձնաժողովը 2018 թվականին ևս շարունակելու է ակտիվ աշխատանքները պետական տարբեր մարմինների հետ՝ մրցակցության վրա բացասաբար ազդող երևույթների վերացման ուղղությամբ:

2. Հանձնաժողովը կարևորում է հասարակության և գործարար շրջանակների կողմից մրցակցային օրենսդրության հանդեպ պատասխանատվության գիտակցության ձևավորման, իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ միջոցառումների կազմակերպումը: Հանձնաժողովը 2017 թվականի ընթացքում ևս կազմակերպել է մի շարք հանդիպումներ գործարար համայնքը ներկայացնող կազմակերպությունների հետ, որի ընթացքում ներկայացվել են մրցակցության օրենսդրության առանձնահատկությունները և քննարկվել բիզնեսի զարգացման խոչընդոտները: Միաժամանակ, ելնելով նախորդ տարիների ընթացքում կուտակված փորձից, Հանձնաժողովը եկել է այն եզրահանգման, որ հաճախ տնտեսվարող սուբյեկտները խախտում են մրցակցության պաշտպանության օրենսդրությունը՝ տեղեկացվածության ցածր մակարդակի պատճառով: Բացի այդ, հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացումը հնարավորություն է տալիս սպառողների միջոցով

վերհանել և դիտարկման առարկա դարձնել մեծ թվով մրցակցային խնդիրներ, ինչպես նաև նպաստել դրանց արդյունավետ լուծմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը, Հանձնաժողովը նախատեսում է ոչ միայն ինտերնետային կայքի, այլև մամուլի հրապարակումների, ասուլիսների, տարբեր հաղորդաշարերի, քննարկումների միջոցով ապահովել մրցակցային օրենսդրության դրույթների վերաբերյալ հանրության տեղեկացվածության բարձր մակարդակ:

3. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում առկա խնդիրները արդյունավետորեն կարգավորելու նպատակով Հանձնաժողովը կարևորում է նաև գործող օրենսդրության կատարելագործումը՝ այն համահունչ դարձնելով հասարակական հարաբերությունների փոփոխություններին: Այս կապակցությամբ նշենք, որ ներկայումս ՀՀ Կառավարությունում է գտնվում Հանձնաժողովի կողմից մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթը, որն արտացոլում է մրցակցության օրենսդրության բարեփոխման հիմնական ուղղությունները և խթան կհանդիսանա մրցակցային իրավիճակի բարելավման համար: Օրենսդրական փոփոխությունների փաթեթով նախատեսվում է նաև ներդաշնակեցնել ՀՀ-ում գործող իրավական ակտերը՝ ԵԱՏՄ նորմատիվ իրավական ակտերի հետ:

V. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար Հանձնաժողովի կողմից սահմանված անհրաժեշտ այլ դրույթներ

Հանձնաժողովի կողմից կատարվող փոխգործակցության շրջանակներում առանձնակի կարևորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ) հետ համագործակցությունը, որի շրջանակներում արդեն իսկ Հանձնաժողովի կողմից կազմակերպվել են քննարկումներ մի շարք շուկաներում գնագոյացման գործընթացների ուսումնասիրությանն առնչվող մեթոդաբանական հարցերի և առկա փորձի փոխանակման աշխատանքների իրականացման վերաբերյալ: Միաժամանակ, Հանձնաժողովի և ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի միջև համագործակցության շրջանակներում ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի աշխատակիցները փորձի փոխանակման նպատակով հրավիրվել և մասնակցել են Հանձնաժողովի կողմից կազմակերպված սեմինարներին, քննարկումներին: Հանձնաժողովները համատեղ աշխատանքներ են իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների հայտնաբերման, դրանց դադարեցման և հետագայում բացառման ուղղությամբ: Հանձնաժողովների միջև կնքված համաձայնագրի շրջանակներում իրականացվում է հավաքագրված տեղեկատվության պարբերական փոխանակում՝ հնարավորություն տալով գործուն արձագանքել առանձին շուկաներում հնարավոր խնդիրների առաջացմանը: Բացի այդ, համագործակցության շրջանակներում Հանձնաժողովն օժանդակել է ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ին արտերկրի մրցակցային մարմինների գործելաոճին, վարույթների իրականացման ընթացակարգերին, մրցակցության ոլորտին առնչվող իրավական նորմերին և չափորոշիչներին, ինչպես նաև աշխատակիցների մասնագիտական կարողությունների ընդլայնման գործընթացին ծանոթանալու հարցում: Վերը թվարկված բոլոր ուղղություններով Հանձնաժողովը 2018 թվականին ևս շարունակելու է սերտ համագործակցությունը ԼՂՀ ՀԾՏՄԿՊՀ-ի հետ մրցակցային խնդիրների բացահայտման և կանխարգելման նպատակով:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում արդյունավետ համագործակցություն է ծավալել ՀՀ-ում գործող միջազգային և դոնոր կազմակերպությունների, մրցակցության պաշտպանությամբ զբաղվող օտարերկրյա կառույցների հետ: Հանձնաժողովի գործունեության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում միջազգային պայմանագրերով սահմանված՝ տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարումը:

Հանձնաժողովն ակտիվ մասնակցություն է ունեցել ԵԱՏՄ անդամակցության շրջանակներում մրցակցային մարմինների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից իրականացվող համատեղ ուսումնասիրություններին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հարուցված վարույթների իրականացմանը: Այս ուղղությամբ ևս 2018 թվականին Հանձնաժողովը նախատեսում է շարունակել համագործակցությունը՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համատեղ ուսումնասիրությունների իրականացման, ինչպես նաև մրցակցային օրենսդրության իրավապայմանագրային բազայի կատարելագործման նպատակով:

Միաժամանակ, Հանձնաժողովը ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի շրջանակներում 2018 թվականի ընթացքում կմասնակցի մի շարք ոլորտներում (բժշկական սարքավորումների, ոչ-մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և իրացման ապրանքային շուկաների, բջջային կապի (ռոմինգ) ծառայության մատուցման, ավիացիայի, գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման և այլն) համատեղ ուսումնասիրությունների իրականացմանը, ինչպես նաև աշխատանքներ կիրականացնի նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված՝ մրցակցային միջավայրի բարելավման առաջարկների իրագործման ուղղությամբ:

Այսպիսով, Հանձնաժողովը 2018 թվականին հետևողականորեն կշարունակի սերտ համագործակցությունը վերոնշյալ կազմակերպությունների և մարմինների հետ՝ մրցակցային խնդիրների լուծման ուղիների բացահայտման նպատակով:

Աղյուսակ

Համաշխարհային մրցունակության
գեկույցում Հայաստանի և մի շարք երկրների մրցակցային միջավայրին առնչվող
ցուցանիշների վերաբերյալ

Երկիր	Դիրք										
	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016

Շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների ազդեցությունը մրցակցության վրա

+82

Հայաստան	121	131	133	129	133	133	90	75	93	79	51
Ռուսաստան	86	78	79	92	88	101	107	93	75	69	59
Ղազախստան	67	81	89	87	91	93	83	78	68	57	69
Վրաստան	101	108	95	98	113	112	121	119	103	88	76
Մոլդովա	-	-	-	-	102	111	130	133	125	124	127
Ռիկրահնա	79	95	75	91	128	129	108	132	129	98	99

Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը

+61

Հայաստան	114	130	132	132	138	138	116	97	105	88	77
Ռուսաստան	96	106	95	107	108	111	124	116	102	83	82
Ղազախստան	72	81	90	92	113	121	95	91	94	68	83
Վրաստան	82	94	111	125	135	135	141	138	127	116	114
Մոլդովա	-	-	-	-	119	123	130	133	133	135	134
Ռիկրահնա	84	98	96	111	126	136	132	137	136	136	136

Երկիր	Դիրք										
	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016

Տեղական մրցակցության ուժգնությունը

+45

<i>Հայաստան</i>	<i>112</i>	<i>124</i>	<i>132</i>	<i>128</i>	<i>136</i>	<i>139</i>	<i>130</i>	<i>102</i>	<i>85</i>	<i>85</i>	<i>91</i>
Ռուսաստան	68	92	108	106	115	124	124	113	74	77	81
Ղազախստան	74	74	97	101	109	117	113	120	111	94	106
Վրաստան	92	115	114	115	124	128	127	123	105	91	78
Մոլդովա	-	-	-	-	101	104	108	119	99	103	114
Ուկրաինա	78	93	105	111	118	120	104	106	101	99	108